(կազմված է 13 Հոկտեմբեր 2025թ. և բաղկացած է 5 թերթից)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՑԱԽՅԱՆ ԽԱՉ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հոգաբարձուների խորհրդի
13. 10. 2025թ. թիվ 5 կայացած նիստի
որոշմամբ

Հիմնադրամի տնօրեն՝

Սևակ Հակոբյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
«22» 05. 2025 թ.

գրանցման համար՝ 222.160.1458361

ՀՎՀՀ՝ 01082359
22.05.2025թ. գրանցված կանոնադրության թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «04» 11 2025թ.

աշխատակից՝

«ԱՐՑԱԽՅԱՆ ԽԱՉ» ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽՅԱՆ ԽԱՉ» ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արցախյան խաչ» հումանիտար հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ, նախկին անվանումը՝ «Արցախյան խաչ» սոցիալ-բարեգործական հիմնադրամ) կամավոր գույքային վնասների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հիմնադրամն ստեղծվել է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

3. Հիմնադրամի հիմնադիրն է

Վիկտոր Գուրգենի Հայրապետյանը՝ ՌԴ քաղաքացի, անձնագիր 46 07 816618, տրված 04092007 թվականին, Ռուսաստանի, Մոսկվայի մարզի Օդինցովո շրջանի Նեմչինովկա ավ. ՊՄԾԿ ՏԿ-ի կողմից, ստորաբաժանման ծածկագիր՝ 500-107, հաշվառված Մոսկվայի մարզ, Օդինցովոյի շրջ., Նովոիվանովսկոե քաղաքատիպ ավան-աշխ., Ագրոխիմիկների փողոց, տ. 3, բն. 51:

4. Հիմնադրամի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Արցախյան խաչ» հումանիտար հիմնադրամ, հայերեն կրճատ՝«Արցախյան խաչ»

2) ռուսերեն լրիվ՝ гуманитарный фонд “Арцахский крест”, ռուսերեն կրճատ՝ “Арцахский крест”.

3) անգլերեն լրիվ՝ “Artsakhian Cross” humanitarian fund, անգլերեն կրճատ՝ “Artsakhian Cross”.

5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ քաղաք Երևան, Նոր Նորք Մոլդովական փողոց 2/1 շենք, 11 բնակարան:

6. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ է:

7. Հիմնադրամի շահառուներն են Հիմնադրամի նպատակներից բխող սոցիալական խոցելի խմբերում ընդգրկված ֆիզիկական անձիք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

8. Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝

1) ապահովելու և պահպանելու կայուն և արդյունավետ կապեր Արցախից և նախկին Ադրբեջանի ԽՍՀ այլ շրջաններից տեղահանված հայերի միջև.

2) նպաստելու էթնիկական նշանակության հարցերի քննարկմանը.

3) միավորել հայ ժողովրդի մի հատվածը հանդիսացող արցախցիներին, որոնք ենթարկվել են էթնիկ զտումների և իրենց բնակության պատմական վայրերից բռնի տեղահանության.

4) էթնիկական, մշակութային և լեզվական ինքնության պահպանում.

5) հայրենիք վերադառնալու նախադրյալների ստեղծում.

6) սեփական և ներգրավված (հովանավորչական, մարդասիրական և այլ) միջոցներով բարեգործական ծրագրերի իրականացումը.

7) սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցությունը.

8) սոցիալական պաշտպանության ոլորտում պետական և մասնավոր հատվածների գործընկերությունում հնարավոր ծրագրերը հետազոտելը և բացահայտելը.

9) կրթական, սպորտային և մշակութային ծրագրերի իրականացմանը նպաս միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, ինչպես նաև աջակցություն ն ծրագրերի իրականացմանը.

10) երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրության դաստիարակությա համամարդկային արժեքների պահպանման պայմանների ապահովումը.

11) բնակչության հոգևոր և մտավոր ներուժի զարգացման ամրապնդումը, կրթութ գիտության, մշակույթի և սպորտի զարգացման միասնական ռազմավարության մշակու դրա կենսագործման նպաստելը.

9. Հիմնադրամի գործունեության առարկան է՝

1) Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության բնագավ գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործման աջակցությունը.

2) առանձին գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը և դրանց արդյունք ներդրման աջակցությունը.

3) սոցիալական պաշտպանության բնագավառում ռազմավարական ծրագրերի մշակու

4) սոցիալական զարգացման ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց օժանդակ

5) նպաստել Արցախի և արցախցիների ինքնության և մշակութային ժառանգությ պահպանմանը՝ բարբառների, մշակութային առանձնահատկությունների համախմբվածության պահպանում, ստեղծել շփման և համատեղ գործունեության հնարավորություններ.

6) տեղեկատվական, կազմակերպչական, ինչպես նաև հոգևոր միասնության, պատմա և էթնոմշակութային արժեքների վերականգնման և պահպանման աշխատանք իրականացում,

7) արցախցիների իրավունքների համակողմանի պաշտպանության նպաստող անհրաժ փաստերի և հիմքերի հավաքագրում.

8) աջակցություն արցախցիների սոցիալ-տնտեսական, գույքային և այլ հիմնա իրավունքների վերականգնման հետագա ծրագրերի մշակմանը.

9) աջակցել Արցախի ժողովրդի կարծիքն ազատ արտահայտելու և նրա շա պաշտպանությանը, ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակներում.

10) գիտական սեմինարների, համաժողովների անցկացումը և ցուցահանդես կազմակերպումը.

11) ուսուցման կազմակերպման միջոցով սոցիալական պաշտպանության բնագավա մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը.

12) հիմնադրամին ներկայացվող ծրագրերի փորձաքննությունը և հաստատումը, դ իրականացման աշխատանքների ֆինանսավորումը, խորհրդատուների (գործակալների միջնորդների) ընտրությունը.

13) իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածումը և հան իրազեկումը.

14) պետական կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգե աղբյուրներից ֆինանսական աջակցությամբ այլ ծրագրերի իրականացումը:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

10. Հիմնադրամը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական կարգավիճակ:

11. Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

12. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվան հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթուղ անհատականացման այլ միջոցներ: Հիմնադրամի ձևաթուղթը պարունակում է նշու Հիմնադրամի անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների, համարների մասին:

13.Հիմնադրամը կարող է ունենալ խորհրդանիշ, իր անվանումը պարունակող դրոշմ ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

14. Հիմնադրամն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:

15. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Հիմնադրամի պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

16. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

17. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Տարբեր աղբյուրներից, ինչպես նաև իր տնտեսական գործունեությունից ստացված միջոցներն օգտագործվում են միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

18. Հիմնադրամը կարող է՝

1) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ.

2) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով՝ այդ թվում՝ նաև անհատույց, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

3) օտարել, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել Հիմնադրամին պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

4) կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, իր աշխատողներին և այլ անձանց գործուղել այլ երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ.

5) ներդրումներ կատարել սույն կանոնադրության 21-րդ կետում նշված ֆինանսական ակտիվներում.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան անդամակցել տեղական, միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին.

7) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ ստանալ վարկեր, փոխառություններ, դրամաշնորհներ, հանգանակություններ, տիրապետել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտները.

8) օրենքով սահմանված կարգով ստանալ բանկային գաղտնիք կազմող և այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

9) իրականացնել օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

19. Հիմնադրի կողմից Հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

20. Հիմնադրամի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

1) Իրականացվող ֆինանսական և նյութական ներդրումները.

2) քաղաքացիների և կազմակերպությունների բարեգործական նվիրատվությունները.

3) զարգացման ծրագրերում ընդգրկված խմբերի դրամական և նյութական ներդրումները.

4) տեղական և օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպությունների ֆինանսական ու նյութական ներդրումները և նվիրատվությունները.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

21. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա բանկերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բացել հաշվարկային ու այլ հաշիվներ (այդ թվում՝ տարադրամային):

22. Հիմնադրամի բոլոր գործարքները և բանկային հաշիվներից վճարումները կատարվու
են համապատասխան ֆինանսավորող կողմերի հետ համաձայնեցված կարգով
հիմնավորվում են անհրաժեշտ փաստաթղթերով:

23. Հիմնադրամի ֆինանսական միջոցներն օգտագործվում են՝ վարկայի
համաձայնագրերի և նվիրաբերությունների նպատակներին համապատասխան:

24. Հիմնադրամը հրապարակում է տարեկան հաշվետվություն իր միջոցներ
օգտագործման մասին:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան՝ իրավունք ունի

1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.

2) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված
կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն
իրականացնելու համար.

4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր,
ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

5) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակիցը.

6) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

26. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն
դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա
ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամը ձեռնարկատիրական
գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական
ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

27. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին ու իրավական
ակտերին, ինչպես նաև Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան.

2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ
ներկայացնել պետական մարմիններ.

4) իրականացնել օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Հիմնադրամի մարմիններն են՝

1) Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝
հոգաբարձուների խորհուրդն (այսուհետ՝ Խորհուրդ) է:

2) Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող մարմինը՝
Հիմնադրամի գործադիր տնօրենն (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) է:

29. Խորհուրդը կազմված է երեք անդամից: Խորհուրդը կազմավորվում է հիմնադրի կողմից:

30. Հիմնադրամի Գործադիր տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը:
Գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն
կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

31. Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

32. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց
վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է
սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են խորհրդի անդամի
պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է
խորհուրդը:

33. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է օրենքով սահմանված դեպքերում: Խորհրդի անդամի լիազորությունների դադարման դեպքում խորհրդի նոր անդամը նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով:

34. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

4) ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

35. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել խորհրդի նիստերին.

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից:

36. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Հիմնադրամի ռազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը.

2) Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

4) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) խորհրդի նախագահի, Գործադիր տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

10) Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

11) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

12) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

13) տարեկան մեկ անգամ Գործադիր տնօրենի հաշվետվությունները լսելը.

14) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

15) Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

16) Հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

17) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

18) Հիմնադրամի աշխատողների վարձատրման, պարգևատրման և խորհրդի անդամների, իրենց կողմից խորհրդի անդամների պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման վճարման կարգի հաստատումը.

19) Հիմնադրամի կողմից խոշոր գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը.

20) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

37. Սույն կանոնադրության իմաստով խոշոր գործարք է համարվում մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների կնքումը, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են

Հիմնադրամի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է տվյալ տարվա համար հաստատված վարչական ծախսերի հինգ տոկոսը:

38. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

39. Խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է նիստերի միջոցով:

40. Խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Գործադիր տնօրենը:

41. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

42. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, կարող է կազմավորել խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.

2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

4) Գործադիր տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) օրենքով նախատեսված դեպքերում խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

43. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

44. Գործադիր տնօրենը՝

1) ապահովում է Հիմնադրամի բնականոն գործունեությունը.

2) պատրաստում է խորհրդի նիստի օրակարգը և որոշումների նախագծերը.

3) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից.

4) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

5) գործում է առանց լիազորագրի.

6) տալիս է լիազորագրեր.

7) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

8) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

9) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, վարչական, գործառնական ծախսերի նախահաշիվը և ներդրումների ծրագիրը.

10) առաջարկ է ներկայացնում արտահերթ խորհրդի նիստ գումարելու վերաբերյալ.

11) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

12) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

13) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

14) իր իրավասության սահմաններում ֆինանսավարկային կազմակերպություններին տալիս է երաշխավորագրեր:

45. Գործադիր տնօրենը առանց խորհրդի համաձայնության չի կարող զբաղեցնել այլ պաշտոն, կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

46. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Հիմնադրամի Գործադիր տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

47. Գործադիր տնօրենի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է Գործադիր տնօրենի տեղակալը:

48. Հիմնադրամի գործունեությանը և միջոցների հավաքագրման գործին նպաստ բերած անհատներին կարող է շնորհվել պատվավոր անդամի կոչում, Հիմնադրամին ակնառու ծառայություններ մատուցած անհատներին՝ բարի կամքի դեսպանի կոչում:

1) Պատվավոր անդամը խորհրդի նախագահի հրավերով խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել խորհրդի նիստերին:

2) Հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամի և բարի կամքի դեսպանի թեկնածությունը առաջադրում է Հիմնադիրը կամ Հոգաբարձուների խորհրդի նախագահը, ընտրությունը իրականացնում է Հոգաբարձուների խորհուրդը՝ ձայների պարզ մեծամանությամբ:

7. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Խորհրդի անդամները, մինչև խորհրդի նիստի անցկացման օրվան նախորդող տասներորդ օրը Հիմնադրամի գործադիր տնօրենին ներկայացնում են նիստի օրակարգում ընդգրկվելիք հարցերը և դրանց վերաբերյալ անհրաժեշտ նյութերը (կարծիքները, խորհրդի որոշման նախագծերը):

50. Գործադիր տնօրենը, ստացված, ինչպես նաև իր կողմից բարձրացված հարցերի հիման վրա կազմում է խորհրդի նիստի օրակարգը և համապատասխան որոշումների նախագծերը: Գործադիր տնօրենը կազմված օրակարգը, որոշումների նախագծերը, կից նյութերը ներկայացնում է խորհրդի անդամներին, խորհրդի նիստի անցկացման օրվան նախորդող երրորդ օրը:

51. Խորհուրդը նիստի ընթացքում հաստատում է Գործադիր տնօրենի կողմից ներկայացված օրակարգը:

52. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3–ի պահանջով, խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

53. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ՝ բացառությամբ օրենքով կամ սույն կանոնադրության 55-57-րդ կետերով նախատեսված դեպքերի: Նիստին մասնակից կարող են համարվել նաև խորհրդի այն անդամները, ովքեր հարգելի պատճառով նիստից բացակայելով, խորհրդին նախօրոք ուղարկել են իրենց գրավոր կարծիքները նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ: Այդ փաստաթղթերը խորհրդի կողմից կարող են ընդունվել որպես բացակայող խորհրդի անդամի քվեարկություն: Այդ դեպքում դրանք հաշվառվում են տվյալ հարցի քվեարկության արդյունքում և կցվում են նիստի արձանագրությանը:

54. Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային և այլ շահերին վերաբերող հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

55. Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

56. Գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

57. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

58. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

59. Խորհրդի նիստերը արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը և տվյալ նիստի քարտուղարը: Արձանագրությունը պահվում է Հիմնադրամում առնվազն հինգ տարի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

60. Խորհրդի որոշումների նախագծերի վերջնական տարբերակները համաձայնեցվում են խորհրդի անդամների հետ, որից հետո դրանք ստորագրում է խորհրդի նախագահը:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԸ

61. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը կատարվում է անկախ աուդիտորների կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

62. Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է անցկացվել արտահերթ աուդիտորական ստուգում:

63. Աուդիտորներն ընտրվում են մրցութային կարգով և հաստատվում խորհրդի կողմից: Մրցույթը կազմակերպում է Գործադիր տնօրենը:

9. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

64. Հիմնադրամն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

65. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

66. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: